

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 160

**Նախընթաց շնորհք** – Գլխաւոր վարդապետութիւնը որը հիմնաւորում է Արմէնական աստուածաբանութիւնը ճանաչած է որպէս նախընթաց շնորհքի վարդապետութիւնը՝ որը հարկաւոր է փրկութեան համար: Անգլերէնում «prevenient» բառը գալիս է Լատիներէնից, եւ բազկացած է «pre» նախամասից, որը նշանակում է նախ կամ նախքան, եւ արմատ «venio» բայից, որը նշանակում է ընթանալ կամ գալ, ուստի նախընթաց շնորհք մի շնորհք է որը գալիս է նախքան փրկութիւն եւ հարկաւոր է փրկութեան համար:

Արմէնիոսը ուսուցանեց թէ նախընթաց շնորհքը փրկութեան սկզբնակէտն է: Այդ մատակարարում է մեղաւորներին ամեն ինչ որ պէտք է փրկութեան համար՝ որով նրանց կամքը վերականգնում է եւ նրանք զօրութիւն են ստանում ընտրելու Աստծուն եւ փրկելու: Աստուած բաշխում է այս շնորհքը ամեն մարդուն որը աշխարհք է գալիս՝ հենց ծնունդից: Արմէնիոսը նոյնիսկ բացատրեց որ մարդը «պարզապէս կրաւորական» է (անգործ է) այս արարքում, եւ թէ «նա կարող է անել ոչինչ բացի ստանալ այդ եւ զգալ այդ»: Մինչեւ հիմա թուում է որ նախընթաց շնորհքի Արմէնական գաղափարը Աստծոյ մի մենակատար եւ անդիմադրելի գործ է: Բայց յետոյ, Արմէնիոսը շարունակում է բացատրելով թէ՛ «երբ [մարդը] զգում է շնորհքը ազդելով կամ հակելով իր միտքն ու սիրտը, նա ազատօրէն ընդունում է այդ, այնպէս որ նա կարող է միեւնոյն ժամանակ ետ պահել իր համաձայնութիւնը»: Ուրեմն ազատելով իր մեղքի գերութիւնից եւ հոգեւորապէս մեռած վիճակից, մարդը հիմա կարող է կամ համագործակցել այս շնորհքի հետ եւ ընդունել այդ, կամ էլ չհամագործակցել դրա հետ եւ մերժել այդ: Ուստի մարդու պատասխանի նկատմամբ նախընթաց շնորհքը համակատար եւ դիմադրելի է, կախեալ մարդու համագործակցութիւնից եւ որոշումից: Ուստի, Արմէնականութեան մէջ նախընթաց շնորհքը փրկութեան համար բաւարար է բայց ոչ ազդեցիկ: Այդ հարկաւոր է, մատակարարելով մարդուն այդ ինչ որ պէտք է փրկութեան համար, բայց այդ չի երաշխաւորում որեւէ մէկի փրկութիւնը:

Ուրեմն հենց սրանից պարզ է որ մի հիմնական տարբերութիւն կայ Կալւինականութեան եւ Արմէնականութեան միջեւ: Արմէնական աստուածաբանութեան նախընթաց շնորհքը Կալւինականութեան վերածնութիւնը չի: Թէպէտ Յանդիմանութեան կէտերի մէջ այս նախընթաց շնորհքը կոչւած է որպէս Հոգու վերածնութեան գործը, սակայն իրականում այս մեղաւորի մտքի, կամքի եւ կարողութեան արթնութիւնն կամ վերականգնումն է որպէսզի նա կարողանայ հաւատալ Քրիստոսին: Բայց եւ այնպէս, մեղաւորը դեռ կարող է դիմադրել այս շնորհքը: Բայց եթէ մարդը համագործակցի այս շնորհքի հետ եւ հաւատայ Քրիստոսին, ապա եւ միայն այն ժամանակ նա վերստին կ'ընդունի կամ հոգեւորապէս կ'կենդանանայ: Ուստի Արմէնական աստուածաբանութեան մէջ Աստուածաշնչում նշուած վերածնութիւնը մարդու հաւատքի պտուղն է:

Սակայն, Կալւինականութեան մէջ վերածնութիւնը միմիայն մեղաւորի իր կարողութիւնների վերականգնութիւնը չի, բայց այդ մեղաւորի բնութեան էական վայրկեանական փոփոխութիւնն է՝ հոգեւորապէս մահից դէպի հոգեւորապէս կեանք: Այս Աստծոյ մենակատար ու անդիմադրելի գործն է, ուր Հոգին լուսաբանում է մեղաւորի միտքը, վերանորոգում է նրա կամքը, եւ փոխում է նրա սրտի դիրքորոշումը: Աստծոյ այս գործը փրկութեան համար ոչ միայն հարկաւոր եւ բաւարար է, իսկ այդ փրկութեան համար նաեւ ազդեցիկ է: Մի վերածնուած անձ անշուշտ, յօժարութեամբ եւ առանց բացառութեամբ կ'հաւատայ Քրիստոսին: Ուստի, Քրիստոսին հաւատալը վերածնութեան անխուսափելի պտուղն է՝ քանի որ այս աստուծային գործը անդիմադրելիօրէն ազդեցիկ է (Եզեկիէլ 36:26-27, Մատթէոս 7:16-18, Եփեսացիս 2:1-10):

Մի ուրիշ գլխաւոր տարբերութիւն մարդու ընկած բնութեան իրականութիւնն է, որովհետեւ թէպէտ Արմէնական աստուածաբանութիւնը հաստատում է բոլոր մարդ արարածների լիովին պղծութիւնը, սակայն իրականում նախընթաց շնորհքի պատճառով ոչ մի մարդ արարած գոյութիւն ունի այս վիճակում, քանի որ իւրաքանչիւր անձ գալիս է աշխարհք ստանալով Աստծոյ այս գերբնական շնորհքը՝ որով նա ազատում է իր լիովին պղծուած վիճակից, ստանալով զօրութիւն կամենալու եւ անելու այն ինչ որ յիրաւի բարի է: Այս մի երեւակայական վիճակ է, ուր մարդիկ ոչ հոգեւորապէս մեռած են ոչ էլ հոգեւորապէս կենդանի: Եփեսացիս 2:1-3ում Պօղոսը բացատրում է մարդիկ որոնք ոչ թերփառում իսկ իրականում քայլում եւ ապրում էին որպէս ապստամբութեան եւ բարկութեան որդիք, մեռած իրենց մեղքերում. եւ նա խմբում է բոլոր ոչ վերածնուած մարդկանց այս վիճակում (Հռովմայեցիս 3:10-18): Միայն շնորհքը որ Պօղոսը գիտէ վերածնութեան շնորհքն է, որով Աստուած հոգեւորապէս մեռած մարդուն հոգեւորապէս կենդանի է դարձնում՝ ոչ միայն հոգեւորապէս զօրացած: Չկայ միջին մի վիճակ (համարներ 4-5):

Արմէնական աստուածաբանութիւնը նշում է մի քանի համարներ որպէսզի փաստի թէ Սուրբ Գիրքը հաստատում է այս նախընթաց շնորհքի գաղափարը (օրինակի Յովհաննէս 1:9, 12:32, Տիտոս 2:11), բայց ուղիղ մեկնաբանութիւնը ցոյց է տալիս որ չկայ որեւէ փաստ այսպէս մի «ընդհանրական կարողացումի» գաղափարի վերաբերեալ ուսուցանուած Սուրբ Գրքում. փոխարէն այս գաղափարը Աստուածաշնչի մէջ է կարդացում կամ ներդրում մարդկանց կողմից՝ ջանանալով պահպանել թէ Աստծոյ արդարութիւնը եւ թէ մարդու ազատութիւնը: